Տեղեկատվական գրքույկ

ԱՌԱՋՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ ՀՀ-ՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԻՍ. ԼԳԲՏ+ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ, ԱՊԱՍՏԱՐԱՆ ՀԱՅՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Առաջնային հարցեր ՀՀ-ում աջակցություն ստանալիս. ԼԳԲՏ+ փախստականների, ապաստարան հայցողների համար» տեղեկատվական գրքույկը պատրաստվել է «Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպության և «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» հասարակական կազմակերպության կողմից:

Տեղեկատվական գրքույկը պատրաստվել է փորձագետ, սոցիալական աշխատող Աննա Մելիքյանի ներգրավմամբ:

© «Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն (Փինք Արմենիա)
© «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» հասարակական կազմակերպություն

Հուլիս, 2025 թ.

Այս հրապարակումը պատրաստվել է «Կանանց դեմ բռնության վերացման ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամի» ֆինանսավորմամբ, սակայն արտահայտված տեսակետները և ներառված բովանդակությունը չեն ենթադրում ՄԱԿ-ի կողմից պաշտոնական հաստատում կամ ընդունում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ 3

Ո՞Վ Է ԱՊԱՍՏԱՐԱՆ ՀԱՅՑՈՂԸ, ՓԱԽՍՏԱԿԱՆԸ 4

ԻՆՉՊԵՍ Է ԿԱՋՄԱԿԵՐՊՎՈՒՄ ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 8

ԻՆՉՊԵՍ ԳՏՆԵԼ ԲՆԱԿԱՐԱՆ 12

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ՏՐԱՆՍՊՈՐՏԻՑ 13

ԻՆՉ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԿԱՆ 14

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ 15

ԵԹԵ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՔ ՀՈՐՄՈՆԱԼ ԹԵՐԱՊԻԱ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՄ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՔ ՍԵՌԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ ՀՀ-ՈՒՄ 17

ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 19

ԻՆՉՊԵՍ ԳՏՆԵԼ ԱՇԽԱՏԱՆՔ 21

ԻՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ԵՆԹԱՐԿՎԵԼ ԵՔ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ 22

ԿԱՐԵՎՈՐ ՀՈՒՇՈՒՄՆԵՐ 23

ԿԱՐԵՎՈՐ ԿՈՆՏԱԿՏՆԵՐ 24

ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

Տարեց տարի փախստականների թիվը աճում է ինչպես ամբողջ աշխարհում, այդպես էլ ՀՀ-ում: Այս աճը պայմանավորված է սոցիալ-տնտեսական, քաղաքական և մի շարք այլ հիմնախնդիրներով: ԼԳԲՏ+ փախստականները առավել խոցելի են, քանի որ վտանգ կա բախվելու բազմաշերտ խտրականության՝ պայմանավորված սեռական կողմնորոշմամբ, գենդերային ինքնությամբ, հաշմանդամության կարգավիճակով, ռասայով, մաշկի գույնով և այլն:

Այս գրքույկը ուղղված է աջակցելու և ուղղորդելու ԼԳԲՏ+ փախստականներին ՀՀ-ում: Այստեղ Դուք կարող եք գտնել առաջնային տեղեկություն, թե ինչպես կողմնորոշվել ՀՀ-ում հասանելի աջակցության տարբեր ձևերից, որ դեպքում ուր դիմել, ինչ իրավունքներ ու իրավական կարգավորումներ են առկա, որտեղ և որ կառույցներին է հնարավոր դիմել բռնությանը կամ խտրականությանը բախվելիս:

Այս ուղեցույցում ներառված հղումները և տեղեկությունը ներկայացված են 2025թ.-ին հասանելի տվյալներին համապատասխան: Եթե կարդալու պահին որոշ հղումներ չաշխատեն, ապա կարող եք փորձել անգլերենով փնտրել նշված կառույցների և կազմակերպությունների տվյալները որոնողական հավելվածներով:

Ո՞Վ Է ԱՊԱՍՏԱՐԱՆ ՀԱՅՑՈՂԸ, ՓԱԽՍՏԱԿԱՆԸ

Ըստ «Փախստականների և ապաստարանի մասին» ՀՀ օրենքի հոդված 5-ի և 6-ի[1]՝

Ապաստան հայցողն այն օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձն է, որը Հայաստանի Հանրապետությունում ապաստանի հայց է ներկայացրել:

Հայաստանի Հանրապետության տարածքում ապաստանի հայց ներկայացրած օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը մինչև ապաստանի ստացման համար իր դիմումի մասին վերջնական որոշում կայացնելը համարվում է ապաստան հայցող և Հայաստանի Հանրապետությունում օգտվում է ապաստան հայցողների՝ սույն օրենքով սահմանված բոլոր իրավունքներից:

Փախստական է համարվում՝

1) այն օտարերկրյա քաղաքացին, որը ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և չի կարող կամ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն և գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, չի կարող կամ այդ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում վերադառնալ այնտեղ.

[1] «Փախստականների և ապաստարանի մասին» ՀՀ օրենք, https://www.arlis.am/hy/acts/193804/latest

2) այն օտարերկրյա քաղաքացին, որը ստիպված է լքել իր քաղաքացիության երկիրը, իսկ քաղաքացիություն չունեցող անձը՝ իր նախկին մշտական բնակության երկիրը՝ համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների պատճառով:

Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիների համար սահմանվում են կացության հետևյալ կարգավիճակները.

ա) ժամանակավոր.

բ) մշտական.

գ) հատուկ:

- **Ժամանակավոր կացության կարգավիճակը** տրվում է յուրաքանչյուր օտարերկրացու, եթե նա հիմնավորում է, որ գոյություն ունեն Հայաստանի Հանրապետության տարածքում մեկ տարի և ավել ժամկետով իր բնակվելը հիմնավորող հանգամանքներ:

Այդպիսի հանգամանքներ կարող են լինել՝

ա) ուսումը, կամ

բ) սույն օրենքի 4-րդ գլխի համաձայն՝ աշխատանքի թույլտվության առկայությունը, կամ

գ) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը, ծնողը կամ զավակը լինելը, կամ

դ) Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու

ամուսինը կամ մերձավոր ազգականը (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) լինելը, կամ

ե) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը.

զ) ազգությամբ հայ լինելը.

է) օրենքով սահմանված այլ դեպքեր:

Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է մինչև 1 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ 1 տարով երկարաձգելու հնարավորությամբ:

Ժամանակավոր կացության կարգավիճակը երկարաձգելու դիմումը պետք է ներկայացվի կարգավիճակի ժամկետը լրանալուց առնվազն 30 օր առաջ:

Ուսման նպատակով ժամանակավոր կացության կարգավիճակը երկարաձգելու դիմումը ներկայացնելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կարող է սահմանվել ավելի կարճ ժամկետ:

- **Մշտական կացության կարգավիճակը** տրվում է օտարերկրացուն, եթե նա՝

ա) ապացուցում է Հայաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող ամուսնու կամ մերձավոր ազգականների (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) առկայությունը, Հայաստանի Հանրապետությունում ապահովված է բնակարանով ու գոյության միջոցներով և մինչև մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմում ներկայացնելն օրենքով սահմանված կարգով առնվազն երեք տարի բնակվել է Հայաստանի Հանրապետությունում կամ

բ) ազգությամբ հայ է կամ Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն:

Մշտական կացության կարգավիճակը տրվում է 5 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ նույն ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ: Մշտական կացության քարտը երկարաձգելու դիմումը պետք է ներկայացվի մշտական կացության քարտի վավերականության ժամկետը լրանալուց առնվազն 30 օր առաջ:

Ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակ տալու կամ մերժելու մասին որոշում կայացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը՝ դիմումը ներկայացնելու օրվանից 30-օրյա ժամկետում:

- **Հատուկ կացության կարգավիճակ** տրվում է ազգությամբ հայ օտարերկրացիներին:

Հատուկ կացության կարգավիճակ կարող է տրվել նաև Հայաստանի Հանրապետությունում տնտեսական կամ մշակութային գործունեություն ծավալող այլ օտարերկրացիների:

Կացության կարգավիճակ ստանալու կամ երկարաձգելու համար ներկայացված դիմումի մերժումը օտարերկրացին կարող է բողոքարկել դատական կարգով:

ԻՆՉՊԵ՞Ս Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Դիմողին ապաստարան տրվում է փախստական ճանաչելու միջոցով:

Եթե անգամ Դուք ապօրինի եք հատել սահմանը, և փորձում եք ապաստարան հայցել, Դուք չեք ենթարկվում քրեական կամ վարչական պատասխանատվության: Իրավունք ունեք օգտվելու անվճար գրավոր և բանավոր թարգմանությունից: Իրավունք ունեք օգտվելու իրավաբանական անվճար խորհրդատվությունից հանրային պաշտպանի գրասենյակ դիմելու միջոցով, կամ եթե հարցը վերաբերում է սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հարցերին, կարող եք կապվել Փինք իրավապաշտպան հասարակական կազմակերպության իրավաբանի հետ կամ Իրավունքի կողմ հասարակական կազմակերպության իրավաբանի հետ:

Հանրային պաշտպանի գրասենյակ՝ (+374) 10 600714

«Փինք» իրավապաշտպան ՀԿ՝ (+374) 33 522533

«Իրավունքի կողմ» ՀԿ՝ (+374) 11 880770

Կարող եք դիմել նաև Մարդու իրավունքների պաշտպանին, եթե կարծում եք, որ Ձեր իրավունքները խախտվել են պետության, տեղական ինքնակառավարման մարմինների կամ պաշտոնատար անձանց, ինչպես նաև հանրային ծառայությունների բնագավառում գործող կազմակերպությունների կողմից:

Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) թեժ գիծ՝ 116

ՀՀ-ում ապաստանի դիմում ներկայացնելու համար պետք է

այցելեք ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածք-ների նախարարության միգրացիոն ծառայություն: Այստեղ Դուք պետք է դիմում ներկայացնեք: Եթե կարիք ունենաք օգնության դիմումը լրացնելու ընթացքում, կարող եք դիմել աշխատակիցներին: Դիմումը կարող է լրացվել հայերեն, Ձեր մայրենի լեզվով կամ ՄԱԿ-ի լեզուներից որևէ մեկով (արաբերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, իսպաներեն):

Եթե Դուք Ձեր ընտանիքի հետ եք դիմել միգրացիոն ծառայություն, կարող եք ներկայացնել մեկ ընդհանուր դիմում ընտանիքի որևէ չափահաս անձի կողմից, բայց նաև կարող եք ներկայացնել անհատական դիմում:

Դիմումի հետ միաժամանակ անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- անձնագրի պատճենը, անձը հաստատող այլ փաստա-թղթերի պատճենները, եթե հնարավոր է,
- ծննդյան վկայականի պատճենը (եթե անչափահաս եք),
- Ձեզ մոտ առկա այն փաստաթղթերը, որոնցով, Ձեր կարծիքով, կարող է հիմնավորվել Ձեր դիմումը,
- 2 գունավոր լուսանկար (35×45 մմ):

Ապաստարանի դիմումը քննվում է միգրացիոն ծառայության կողմից, որի հիման վրա կայացվում է որոշում: Որոշումը կարող է լինել դրական կամ բացասական: Եթե որոշումը դրական է, Դուք ստանում եք փախստականի կարգավիճակ: Եթե այն բացասական է, պարտավորեցվում եք լքել ՀՀ-ն, եթե չեք բողոքարկում այդ որոշումը: Նմանատիպ հարցերով խորհրդատվության համար կարող եք զանգահարել՝

«Փինք» իրավապաշտպան ՀԿ՝ (+374) 33 522533

Դիմումի ներկայացումից հետո Ձեզ կկանչեն հարցազրույցի,

որի օրվա ու ժամի մասին պետք է տեղեկացնեն դիմումից հետո երեք օրվա ընթացքում ծանուցագրով: Հարցազրույցի ընթացքում Ձեզ կտան հարցեր Ձեր բնակության երկիրը լքելու պատճառների վերաբերյալ: Փորձեք պատասխանել հարցերին ամբողջությամբ և մանրամասնորեն: Հաճախ տրավմատիկ փորձառության մասին խոսելը բարդ է: Եթե հարցազրույցի ժամանակ զգաք, որ չեք կարողանում շարունակել, խնդրեք մի քանի վայրկյան դադար վերցնել, խորը շունչ քաշեք, և եթե անվտանգ կզգաք, նաև կարող եք կիսվել տվյալ պահին Ձեր զգացածի մասին:

Հարցազրույցը գաղտնի է: Ձեր հայտնած տեղեկությունները չպետք է հաղորդվի երկրի իշխանություններին, ներառյալ դեսպանատներին, կամ որևէ այլ անձի: Այդ տեղեկությունները այլ անձանց կարող են տրամադրվել միայն Ձեր գրավոր համաձայնության դեպքում:

Ցանկության դեպքում հարցազրույցը կանցկացվի Ձեր նախընտրած սեռի աշխատակցի կողմից: Եթե հայերեն չեք խոսում, ապա հարցազրույցը կարող է անցկացվել Միգրացիոն ծառայության կողմից հրավիրված՝ Ձեր նախընտրած սեռի թարգմանչի մասնակցությամբ: Դուք նաև կարող եք առաջարկել թարգմանիչ Ձեր սեփական ընտրությամբ, բայց սեփական միջոցներով: Միգրացիոն ծառայության աշխատակցի կողմից կկազմվի հարցազրույցի արձանագրություն:

Ձեր համաձայնության դեպքում հարցազրույցին կարող է մասնակցել Ձեր փաստաբանը:

Միգրացիոն ծառայություն ապաստանի դիմում ներկայացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Ձեզ պետք է տրամադրվի ապաստարան հայցողի վկայական, որը փաստելու է, որ Դուք օրինական ձևով եք գտնվում ՀՀ-ում: Ապաստարան հայցողի վկայականը տրվում է երեք ամիս ժամկետով մինչև ապաստարան տրամադրելու մասին որոշման կայացումը: Եթե

մինչև ժամկետի ավարտը չի կայացվել որոշումը, վկայականի ժամկետը երկարացվում է ևս երեք ամսով, և այդպես շարունակ:

Միգրացիոն ծառայության ենթակայության տակ գործում է հատուկ կացարան, որը նախատեսված է Հայաստանում ապաստան հայցող անձանց և նրանց ընտանիքի անդամների բնակության համար: Չնայած, վերջին մի քանի տարում Միգրացիոն ծառայությունը հատուկ կացարանում չի տեղավորում ապաստարան հայցողներին՝ պատճառաբանելով, որ ազատ տեղեր չկան: Այնուամենայնիվ, խորհուրդ է տրվում ապաստարան հայցողի դիմումի մեջ նշել դրա մասին կամ ներկայացնել առանձին դիմում: Եթե հատուկ կացարանում ազատ սենյակ չկա, ուղեգիր չի տրվում: Այդ կամ ցանկացած այլ դեպքում, երբ որևէ պատճառով հնարավոր չէ ձեզ սենյակ հատկացնել հատուկ կացարանում, կարող եք դիմել դրամական օգնություն ստանալու համար բնակարան վարձակալելու նպատակով: Դրամական օգնությունը տրամադրվում է երեք ամիս ժամկետով, իսկ եթե ապաստանի դիմումի քննարկման ժամկետը երկարաձգվել է, ապա մինչև դիմումի քննարկման ավարտը (առավելագույնը վեց ամիս):

ԻՆՉՊԵ՞Ս ԳՏՆԵԼ ԲՆԱԿԱՐԱՆ

Եթե ունեք որոշակի գումար և պատրաստ եք ինքնուրույն վարձակալել բնակարան, կարող եք դիտարկել Ձեզ հարմար տարբերակները ներքևում նշված կայքերում: Ցանկալի է, որ տան սեփականատիրոջ հետ կնքեք պայմանագիր: Այն իրավական ուժ չունի, եթե իհարկե նոտարի միջոցով չեք հաստատում, բայց փաստերի տեսանկյունից կարևոր է:

Եթե փնտրում եք բնակարան Երևանում, առավել մատչելի տարբերակներ կարող եք գտնել քաղաքի ծայրամասային հատվածներում: Նաև կարող եք դիտարկել Երևանին մոտ մյուս քաղաքները, որոնք հասանելի են տրանսպորտով, օրինակ՝ Աբովյան, Աշտարակ, Արմավիր, Էջմիածին: Նաև հաշվի առեք, որ այս քաղաքներում հնարավոր է մարդիկ ունենան ավելի կարծրատիպային մտածելակերպ:

Կայքերը որտեղ կարելի է փնտրել բնակարան վարձակալության համար՝

My realty real estate market https://myrealty.am/hy

Bnakaran https://www.bnakaran.com/hy

Estate https://www.estate.am/

List.am https://www.list.am/am/

ԻՆՉՊԵ՞Ս ՕԳՏՎԵԼ ՏՐԱՆՍՊՈՐՏԻՑ

Եթե ապրում եք Երևանում և նախատեսում եք տրանսպորտով երթևեկել, հաշվի առեք, որ հիմնականում տրասպորտային միջոցները ավելի ակտիվ են մինչև երեկոյան ժամը 22:00-ն. որոշները նաև աշխատում են մինչև 00:00-ն: Տրանսպորտով Ձեր երթևեկությունը կարող եք պլանավորել «Yandex Go Armenia» հավելվածի միջոցով որտեղ տարնսպորտ ենթաբաժնում կարող եք տեսնել, թե որտեղ է գտնվում ձեր նախընտրած համարի տրանսպորտը կամ ինչ այլ տարբերակներ կան տվյալ կանգառից: Վճարումները կարող եք իրականացնել «Telcell» հավելվածի միջոցով՝ օնլայն գնելով ուղետումսը: Մեկ այլ տարբերակ է տրանսպորտային քարտով վճարելը, բայց կրկին պետք է ունենաք նախապես գնված փաթեթ, որին կցված է Ձեր բանկային քարտը:

Քաղաքային տրանսպորտը՝ ներառյալ մետրոն, արժե 150 դրամ:

Եթե պլանավորում եք երթևեկել տաքսիով, կաող եք օգտվել «GG», «Yandex Go Armenia», «UVO» հավելվածներից: Ցանկալի է, որ հավելվածում նշեք վերջնակետը: Այսպես կխուսափեք ավելի շատ գումար վճարելուց: Խորհուրդ չի տրվում օգտվել փողոցում կանգնած տաքսիներից կամ օգտվելուց նախապես ճշտեք և պայմանավորվեք վճարվելիք գումարի մասով: Տրանսպորտի վերաբերյալ տեղեկատվությունը վերաբերում է Երևան քաղաքին:

Ի՞ՆՉ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԿԱՆ

Հայաստանում կան երեք հեռախոսային օպերատորներ՝

VivaCell MTS https://www.viva.am/

Team https://www.telecomarmenia.am/hy/

Ucom https://www.ucom.am/

Հեռախոսի համար նախատեսված քարտերը կարող եք գնել այդ օպերատոների գրասենյակներից, նրանք հաճախ առաջարկում են տարբեր փաթեթներ, որոնք ավելի մատչելի են, քանի որ կարող են միևնույն ժամանակ ներառել զանգեր, նամակագրություն և ինտերնետ:

ԻՆՉՊԵ՞Ս ՕԳՏՎԵԼ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ

Փախստականների և ապաստարանի մասին ՀՀ օրենքի 23-րդ հոդվածում նշվում է՝

Հայաստանի Հանրապետության տարածքում ապաստան ստացած փախստականներն իրավունք ունեն օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված սոցիալական ծառայություններից, ստանալու պետական նպաստներ և դրամական այլ օգնություններ, ժամանակավոր անաշխատունակության, արտադրությունում աշխատանքային խեղման, դժբախտ պատահարների և մասնագիտական հիվանդությունների դեպքերի համար տրվող նպաստներ, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում, ինչպես նաև ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակային ապահովության, գործազրկության դեպքում՝ սոցիալական պաշտպանության իրավունք, եթե նրանք բավարարում են տվյալ ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողներն ու ապաստան չստացած փախստականներն ունեն պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հավասար իրավունք, եթե բավարարում են այդ ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները[2]:

[2] «Փախստականների և ապաստարանի մասին» ՀՀ օրենք, հոդված 23, https://www.arlis.am/hy/acts/193804/latest

***

Եթե դուք ԼԳԲՏ+ փախստական եք կամ ապաստարան հայցող եք ՀՀ-ում և ունեք բժշկական ծառայության կարիք, պետք է գնաք Ձեր բնակության վայրի պոլիկլինիկան (այն հասցեի, որը նշել եք միգրացիոն ծառայությունում որպես բնակության հասցե): Պոլիկլինիկայում Ձեզ կցուցաբերվի անվճար ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական աջակցություն: Այս աջակցությունը չի ներառում հորմոնալ թերապիայի և սեռափոխության հետ կապված հարցերը:

Ձեզ հետ տարեք Ձեր ապաստարան հայցողի քարտը/փաստաթուղթը: Պատրաստ եղեք, որ պոլիկլինիկայում հնարավոր է խոսեն միայն հայերեն, և Դուք կարիք կունենաք ուղեկցության, կամ «Google translator»-ի միջոցով կարող եք փորձել բացատրել, թե ինչ ծառայության կարիք ունեք: Առավել արդյունավետ կարող է լինել Ձեր այցը, եթե օրինակ Ձեզ հետ լինի ընկեր, ով խոսում է հայերեն և այն լեզվով, ինչ դուք տիրապետում եք: Կամ, ըստ անհրաժեշտության, կարող եք ներգրավել մասնագետի, ով կարող է Ձեզ ուղեկցել բժշկական հաստատություն: Եթե բախվում եք խտրականության, վատ վերբերմունքի բժշկական հաստատությունում, կարող եք դիմել՝

ՀՀ Առողջապահության նախարարության թեժ գիծ՝ 8003

Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) թեժ գիծ՝ 116

«Փինք» իրավապաշտպան ՀԿ՝ (+374) 33 522533

ԵԹԵ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՔ ՀՈՐՄՈՆԱԼ ԹԵՐԱՊԻԱ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՄ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՔ ՍԵՌԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ ՀՀ-ՈՒՄ

Կարևոր է իմանալ, որ հորմոնալ թերապիան հասանելի է հիմնականում մասնավոր բժիշկների միջոցով: Նախ անհրաժեշտ է դիմել էնդոկրինոլոգ մասնագետի, ում հետ խորհրդատվությունը 2025 թ.-ի դրությամբ միջինում տատանվում է 15000-25000 ՀՀ դրամ: Էնդոկրինոլոգը, մինչև հորմոնալ թերապիային անցնելը, պահանջելու է փաստաթուղթ հոգեբույժի կողմից, և եթե մտավախություններ ունեք հոգեկան առողջության կենտրոն գնալու և անհանգստություն ունեք, որ կարող են խտրական մոտեցումներ ունենալ ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ, կարող եք կապվել կազմակերպության սոցիալական աշխատողի հետ՝ աջակցող մասնագետի մոտ ուղղորդում ստանալու համար (այս գրքույկում չեն նշվում անուններ անվտանգության նկատառումներից ելնելով): Մեկ այցը հոգեբույժի մոտ 2025 թ.-ի դրությամբ միջինում տատանվում է 20000-35000 ՀՀ դրամ: Եթե հոգեբույժի կողմից ախտորոշման կարիք ունեք, սովորաբար ախտորոշումը տրվում է 2-3 այցերի շրջանակներում:

Էնդոկրինոլոգի կողմից նշանակված դեղերը կարող եք գտնել որոշ դեղատներում, երբեմն նաև՝ դրանք պատվիրում են այլ երկներից, եթե չեն գտնում տեղի դեղատներում:

Այս մասով խորհրդատվություն կարող եք ստանալ նաև «Իրավունքի կողմ» ՀԿ-ից:

Կարևոր է նաև իմանալ, որ ՀՀ-ում անվանափոխություն հնարավոր է իրականացնել բավականին սեղմ ժամկետներում, սակայն գենդերի իրավական ճանաչումը դեռևս

կապված է բժշկական միջամտության հետ:

Իհարկե, մենք գիտենք՝ ինչքան կարևոր կարող է լինել Ձեզ համար հորմոնալ թերապիա անցնելը, սակայն մի սկսե՛ք այդ պրոցեսը առանց բժշկի վերահսկողության: Վստահելի բժիշկ մասնագետների կոնտակներ ունենալու համար կարող եք կապվել՝

«Փինք» իրավապաշտպան ՀԿ՝ (+374) 33 522 533

«Իրավունքի կողմ» ՀԿ՝ (+374) 11 880770

ԻՆՉՊԵ՞Ս ՍՏԱՆԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Եթե Դուք ապաստարան եք հայցում Ձեր երեխայի հետ, ով դպրոցում պետք է շարունակի կրթությունը, կարող եք դիմել հանրակրթական մարմիններին՝ դպրոցում Ձեր երեխայի անվճար կրթությունը կազմակերպելու համար: Եթե Ձեր երեխան չի խոսում հայերեն, կարող եք դիմել դպրոց, որտեղ կրթությունը կազմակերպվում է Ձեր նախընտրած լեզվով, սակայն հաշվի առեք, որ հատուկ լեզվական ուղղություններով դպրոցներում կրթությունը կարող է լինել վճարովի: Մեկ այլ տարբերակ է դիմել Ձեր երկրի դեսպանատանը կից գործող դպրոցը:

Եթե ցանկանում եք բարձրագույն կրթություն ստանալ ՀՀ-ում, ապա հաշվի առեք, որ ինչպես ՀՀ քաղաքացիների պարագայում, այնպես էլ Ձեր դեպքում պետք է դիմել նախընտրած մասնագիտության գծով նախընտրած ուսումնական հաստատություն՝ ըստ ընթացակարգի: ՀՀ-ում բարձրագույն կրթությունը վճարովի է, բայց որոշ միջազգային կազմակերպություններ առաջարկում են կրթաթոշակներ փախստականների համար:

Եթե կարիք ունեք հայերեն լեզվի դասերի, «Հայկական Կարմիր խաչ ընկերությունը» հաճախ ունենում է նմանատիպ հնարավորություններ, կարող եք կապվել՝ 8184 թեժ գծի հեռախոսահամարով:

Եթե Դուք կամ Ձեր երեխան բախվեք խտրականության կամ բռնության կրթական հաստատություններում Ձեր կամ Ձեր երեխայի սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության հիմքով, կարող եք կապվել՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության թեժ գիծ՝

(+374) 10 599600

Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) թեժ գիծ՝ 116

«Փինք» իրավապաշտպան ՀԿ՝ (+374) 33 522533

ԻՆՉՊԵ՞Ս ԳՏՆԵԼ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀՀ-ում աշխատանք գտնելու համար կարող եք մուտք գործել հետևյալ կայքերը՝

Job.am https://job.am/

Staff.am https://staff.am/am

Myjob.am https://www.myjob.am/

Worknet.am https://www.worknet.am/hy/

Նաև կարող եք դիմել Զբաղվածության պետական գործակալություն, որտեղ, ըստ ընթացակարգի, Ձեզ պետք է տրամադրեն անհրաժեշտ խորհրդատվություն և տեղեկատվություն: Սակայն այստեղ ևս կարող եք բախվել խտրականության:

Եթե աշխատավայրում ենթարկվում եք բռնության, կարող եք կապվել հետևյալ կառույցների հետ՝

Ոստիկանություն՝ 1-02

Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) թեժ գիծ՝ 116

«Փինք» իրավապաշտպան ՀԿ՝ (+374) 33 522533

Ի՞ՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ԵՆԹԱՐԿՎԵԼ ԵՔ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Եթե ենթարկվել եք **բռնության կամ խտրականության Ձեր սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով** կամ **ենթարկվել եք ընտանիքի անդամների կամ զուգընկերոջ կողմից բռնության**, ապա կարող եք կապվել Ձեզ ծանոթ կազմակերպության մասնագետներից մեկի հետ, այնուհետև՝ անհրաժեշտ խորհրդատվություն ստանալուց հետո կարող եք կապվել ոստիկանության հետ 1-02 հեռախոսահամարով: Եթե անապահովության զգացում ունեք, կապվեք Ձեր ընկերներից մեկի հետ կամ այն անձի հետ, ում վստահում եք: Նա կարող է լինել նաև նախկինում կամ ներկայում Ձեզ հետ աշխատող մասնագետը: Կարող եք այդ անձին խնդրել, որ Ձեզ հետ գա ոստիկանություն:

Չնայած ոստիկանության նպատակը պետք է լինի տուժածին պաշտպանելը, ցավոք որոշ ոստիկաններ կարող են կրկնել հասարակությունում առկա կարծրատիպային պատկերացումները և փորձել վիրավորել Ձեզ: Ամեն դեպքում, եթե տվյալ պահին գնահատում եք, որ Ձեր կյանքին կամ առողջությանն անմիջական վտանգ է սպառնում, ապա առավել ցանկալի է դիմել ոստիկանություն՝ պահանջելով արագ արձագանք:

Եթե բախվում եք նման վերաբերմունքի ոստիկանության աշխատակիցների կողմից, կարող եք կապվել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ և ներկայացնել իրավիճակը՝

Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) թեժ գիծ՝ 116

ԿԱՐԵՎՈՐ ՀՈՒՇՈՒՄՆԵՐ

Կարևոր է՝

- Մի բացահայտեք Ձեր ԼԳԲՏ+ ինքնությունը անծանոթ կամ վստահություն չներշնչող անձանց մոտ:
- Օգտագործեք անվտանգ կապի միջոցներ, մասնավորապես՝ եթե կասկածում եք, որ Ձեր հանդեպ հետապնդում կա: Եթե շփվում եք Ձեր հարազատների հետ, ովքեր բնակվում են Ձեր երկրում, խուսափեք հստակ հասցե ու տարածք նշելուց. միայն տեղեկացրեք, որ ապահով եք:
- Եթե տեղափոխվում եք քաղաքից քաղաք կամ փոխում եք բնակարանը, անպայման տեղեկացրեք Ձեզ համար վստահելի մեկին ՀՀ-ում (կարող է լինել ընկեր, կազմակերպության աշխատակից, ձեզ հետ աշխատող մասնագետ):

Հիշեք:

- Դուք իրավունք ունեք պաշտպանված լինելու:
- Խտրականությունն ու բռնությունը օրենքով արգելված են:
- Դուք պարտավոր չեք լռել: Ձեր ձայնը կարևոր է:

ԿԱՐԵՎՈՐ ԿՈՆՏԱԿՏՆԵՐ

Ոստիկանություն՝ 102

Շտապ օգնություն՝ 103

Արտակարգ իրավիճակների պետական ծառայություն՝ 911

Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) թեժ գիծ՝ 116

Փախստականների հարցերով զբաղվող կառույցներ՝

ՀՀ Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն՝ (+374) 11 275015

«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ՝ (+374) 10 444792

Հայկական կարմիր խաչի ընկերություն՝ 8184

«ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ՝ (+374) 10 541844

Միգրացիայի միջազգային կազմակերպություն՝ (+374) 10 585692

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը (ՄԱԿ ՓԳՀ/ UNHCR)՝ 0 8000 0025

ԼԳԲՏ+ անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույցներ՝

«Փինք» իրավապաշտպան ՀԿ՝ (+374) 33 522533

«Իրավունքի կողմ» ՀԿ՝ (+374) 11 880770

pinkarmenia.org
coalitionagainstviolence.am